

Տ Ա Ր Ա Յ

---

---

# ԹԵՐԹԻԿՆԵՐ

## ԿԵՍՆՔԻ ԳՐՔՈՅՑԿԻՑ

Какая пустота вокругъ, когда нѣть того существа, которое для тебя является всѣмъ міромъ всей вселенной.

Викторъ Гюго.

Գինն 1. 5 կող.

8.91.99  
Ը-36

Բագրիկ

Վայրական «Հովում» գանովակայտ № 3.

1910

89L.99

6-36

Ա. Մ.

Տ Ե Ր Ա Յ Ա Յ

119 NOV 2019

## ԹԵՐԹԻԿՆԵՐ

## ԿԵՍՆՔԻ ԳՐՔՈՅՑԿԻՑ

Какая пустота вокругъ, когда нѣть того существа, которое для тебя является всѣмъ міромъ всей вселенной.

Викторъ Гюго.

ԹԻՖԼԻՍ

Տաւարան «ՀՊՕՒՆՀ» Գանովսկայա № 3.

1910

13 JUL 2013

97963



3174

40

Աշնանային մի կիրակի օր էր:  
Ամբողջ քաղաքը պատաժ էր մտապահուղով: Անձրել մանր կաթիլներով թափուում էր երկնքից կարծես թէ վերջ չպէտք է ունենար: Արամն իր սենեակում մահճակալի վրայ պառկած, աչքերն առաստաղին յառած, ծանր մտքերով տարուած, մտածում էր:

Կարծես այդ օրը մի կոպիտ ձեռք թերթում էր նրա անմիիթար կեանքի գիրքն և ստիպում էր մի բան յիշել անցեալից:

Պատկերները մէկը միւսից սարսափելի կանգնում էին նրա առաջև նորից անհետանում...

Կարծես անցեալի ուրուականը նրա սրտի խորքից վեր էր կացել և հեղնական ժպիտն երեսին ցոյց էր տալիս այդ պատկերներն իր կոպիտ մատով և ասում՝

— Նայիր, նայիր, այդ բոլորի հերոսը դու ես:

Արամը կուչ էր եկել, կարծես թէ իր վրայ մի սարսափելի ծանրութիւն կար և աղէկտուր ձայնով գոշում էր:

— Չեմ ուզնում, չեմ ուզնում...

Բայց պատկերները, ինչպէս ծովի ալիքներ, գալիս էին կանգնում և դարձեալ անհետանում:

Արամն երկու ձեռքով բռնել էր զլուխն և կարծես ուզում էր ստիպել, որ նրանք կանգնեն:

Ա՛խ, ի՞նչ էր Արամի կեանքը. մի տանջանք սկզբից մինչև վերջնա իւր ամբողջ կեանքը տանջանքներով էր անցկացրել:

Նա տեսնում է, ինչպէս երկու տարի առաջ ամառանոցում պատահնել էր մի օրիորդի, որին սիրել էր իւր ալեկոծ սրտով:

Այդ Գայեանէն էր, մի բարձրահասակ, գեղեցիկ օրիորդ:

Արամը յիշեց այն օրը, երբ առաջին անգամ տեսաւ Գայեանէին... Ա՛խ, ինչո՞ւ նա եկաւ և խանգարեց այդ մատաղ պատանու կեանքը. . Ինչո՞ւ նա եկաւ և կանգնեց այդ կեանքի ճանապարհին, ինչպէս մի կախարդական փէրի, ծաղրեց այդ կեանքն ու հեղնանքով հեռացաւ, երբ Արամը կարծում էր թէ բախտի անիւր դարձել է դէպի իրեն...

Նա հեռացաւ, գնաց Արամից,  
երբ նա ուժասպառ, յոգնած երկու  
ձեռքով բռնել էր իր վէրքերով լի  
սիրտը:

Միայն կինն է կարող տղա-  
մարդին թողնել այդ վիճակի մէջ  
և հեռանալ...

**Գայեմնէն այդ արեց:**

— Ես քեզ խղճում եմ, բայց  
ոչնչ չեմ կարող անել...

Ի՞նչ սարսափելի բառեր էին  
այդ բառերը. այդ ասեց Գայեա-  
նէն, որին անշափի և կոյր սիրում  
էր Արամը, և գնաց մի այլ քա-  
ղաք դարձեալ շարունակելու իւր  
կեանքը ..

Իսկ Արամը մնաց տանջուելու,  
նրա կեանքն այդ օրուանից փշ-  
րուած էր, իսկ օրերը սև էին և  
տաղտկալից...

Այժմ տեսնում է նա այն տու-  
նը, ուր կանայք պճնուած ու զու-

գուած, կրծքները մերկացրած,  
անյոդ, սառն աչքերով, սփռթնած  
և ներկած երեսներով. նա տես-  
նում է գարեջրի շիշեր, պար դաշ-  
նամուր, որի վրայ նուազում էր  
մի հաստ պարոն, որի աչքերը  
լիրը հայեցք էին արտայայտում...

**Անա նրան մօտենում է մի**  
**կին, որից փչում է զարեջրի և**  
**օղիկ հօտ:**

— Քնանք...

— Զեմ ուզում... նորից գոչեց  
Արամը...

Նա չէր ուզում տեսնել թէ  
ինչպէս ինքը գնացել էր այնտեղ  
սէրն և զգացմունքը զրամով գը-  
նելու .

— Որքան կեղտոտ եմ, որքան  
կեղտոտ..

Մի նոր տեսարան. մութ և  
խոր պանդոկ, մի քանի սեղան,  
նորից շիշեր, հարբած, կարմրած,

կեանքից զգուած, օրհասից հալածուած, մանր, կեղտոտ մարդիկ...

Արամն այստեղ էր. նա մի անկիւնում նստած, գինու լիքը բաժակն առաջը դրած, լսում էր մի ուստ պատանու, որն ասում էր ընկերոջը:

—Խմիր ընկեր և մի ամաչիր, այստեղ մարդ չկայ, բոլորս էլ կեանքից հալածուած զինեմոլ հարբեցողներ ենք, այստեղ ամենքս էլ եղբայրներ ենք, ով որ բարձրում չէ կարող ապրել գալիս է այստեղ, մենք նրան սիրով ընդունում ենք և միասին խմում... խըշ միր եղբայր, դարդի դարմանը զինին է... խմիր. . Երբ մենք հարբած ենք լինում, միշտ երևակայում ենք, այն ժամանակ ինձ թւում է թէ ես տրորում եմ այս ոտներովս բարձրում ապրողներին և այս ձեռներով նրանց խեղում

եմ, իսկ նրանք բղաւում են, օգնութիւն կանչում... և այդ բոպէներին ես երջանիկ եմ լինում...

Արամն այդ օրից սկսեց խմել, նա հարբեցող դարբաւ, ուսումնարանը թողեց և միշտ հարբում էր ու հարբում...

—Անբախտ եմ ես, անբախտ կրկնում էր Արամը...

Բախտ կայ. բայց միթէ նա աւելի քիչ իրաւունք ունի քան թէ ուրիշները, ինչու, ի՞նչ յանցանքների համար է նրան հետեւում օրհասը:

Մինչ այդ օրը նրա կեանքում չի եղել մի այնպիսի օր, որի մասին նա կարողանար ասել - այսօր ես լաւ կեանք եմ վարել:

Ծանր էր նրա համար կեանքը, նա մի յանդուզն երազող էր, նա ուղում էր անկախ ապրել, ազատ կարծիք յայտնել:

Սարսափելի օրհաս...

Սարսափելի կեանք...

Ահա երկու տարի է, ինչ որ  
նրա մէջ ապրում է մի սարսափե-  
լի միտք — ինքնասպանութիւն և  
մի փոքրիկ յոյսի կայծ, բայց նա  
խաբուած էր, Գայեանէն վերջին  
նամակում գրել էր՝

— Դու ուզում ես, որ ուրիշն  
անբախտ լինի, իսկ դու երջանիկ  
դու եսասէր ես և ամենքի կեանքը  
թունաւորող, միթէ ես քեզ հետ  
երջանիկ կլինէի...

Հանգաւ և կայծը...

Նա չէր ուզում այլևս մտածել,  
վճռած է պէտք է մեռնել...

— Մեռիր, մեռիր, մի ձայն ա-  
սում էր ներսից, դու չես կարո-  
ղանում քո այդ անպէտք գանգը  
ջարդել...

Մի ինչ որ բան խեղդում էր

նրան, նա չէր կարողանում ազատ  
շնչել..

Վեր կացաւ... մօտեցաւ լու-  
սամուտին...

Տը՞նգ. . տը՞նգ...  
Ժամը վեցն էր...

— Արամն ուզում էր լալ, գան-  
գատուել, պատմել իւր վշտերը  
որևէ մէկին ..

Ախեթէ Գայեանէն գար... նա  
ամեն ինչ կասէր նրան, նա կը-  
նստէր նրա կողքին և երկար-եր-  
կար կգանգատուէր օրհասից, իսկ  
յետոյ նրանք միասին կերթային  
հեռու, հեռու...

— Մեռիր, մեռիր, նորից լսուեց  
ձայնը:

Այս, պէտք է մեռնել.  
Սակայն ինչ կլինի նրա մահից  
յետոյ... ոչինչ... ծաղիկները դար-  
ձեալ կծաղկեն, իսկ մարդիկ դար-

ձեալ կծնուին, կապրեն ու կը  
մեռնեն..

Իսկ նրանք, ծնողները.. մայրը  
մազերը կփետէ, արցունքներով  
կթրջի որդու շիրիմը, իսկ հայրը  
սարսափած կնայի զաւակի դիա-  
կին և կասի՝

—Այդ ի՞նչ արեցիր որդեակ:

Աստուած... այդ բառն աղդեց  
նրա վրայ, ինչպէս մի փայտի հա-  
րուած, նա ինքն էլ չգիտէր հա-  
ւատում է, թէ ոչ. նա երբէք չէր  
աղօթել:

Արամը նկատեց սեղանի վրայ  
իր պատկերը, վերցրեց և նայեց:

—Այս անճոռնի և տգեղ պա-  
տանին սէր է ուզում, բայց միթէ  
նա մոռացել է, որ ապրել և սի-  
րել կարող են միայն գեղեցիկները:

Արամը ծիծաղեց. նա վերցըց  
գրիչն և գրեց պատկերի յետել

«Գայեանէ, սա քո զո՞ն է, աղօթիր  
սրա համար»:

Որքան գեղեցիկ բան. նա պէտք  
է Գայեանէից հեռանայ, նա պէտք  
է իրան սպանի... ճանապարհ պէտք  
է բացանի, որ մի այլ ոք նրա խոր-  
տակուած սիրոյ վրայ մի նոր  
կեանք ստեղծի.. Դա մելօդրամա  
է... գեղեցիկ մելօդրամա... Նա  
իրեն զոհում է Գայեանէի համար ..  
Այս, նա կուզէր պատոել իւր  
կուրծքը, այնտեղից հանել իւր  
վիրաւոր սիրտն ու տեսնել ինչիցն  
է այդպէս մղկտում և ցաւ պատ-  
ճառում . .

Սակայն վճռուած է մեռնել ..

Արամը ջղային քայլերով մօ-  
աեցաւ անկողնուն, հանեց բարձի  
տակից ատրճանակը...

Մեռիր, մեռիր...

Աւելի պինդ լսուեց այդ սար-  
սափելի ձայնը...

Նա կանգնած էր սենեակի մէջ  
տեղը, ատրճանակը ձեռքին, զան-  
գուր մաղերը ճակատին թափւած  
աչքերը հեռուն չուած...

Երկինքը պատած էր սկ ամպե-  
րով, կարծես այլևս չպէտք է բա-  
ցուէր:

Ամեն ինչ լուռ էր:

Միայն անձրեն էր, որ պատու-  
հանը թակում էր, կարծես ուզում  
էր ասել՝

— Ե՞լթէ նա կհասկանայ թէ  
ինչ արեց:

Յանկաքիծ Արամն ատրճանակը  
բարձրացրեց և դնելով սրտին գոչեց:

— Զարդւիր, որ այլևս ինձ ցաւ  
չպատճառես:

Լսուեց ատրճանակի ձայնը... և  
մի բան գետին ընկաւ:

\* \* \*

Այն պիշեր մինչև լոյս անձրեն  
էր գալիս. քամին էր միայն գա-  
տարկ փողոցներում վժժալով անց-  
նում և ծառերի վրայի զեղնած  
տերեները մէկը-միւսի ետևից վայր  
էին ընկնում...

Վ Ե Բ Զ



3174

40

ՀՀ Ազգային գրադարան



NL0350932

47463